Կին և քաղաքականությունը

ՀՀ կառավարությունն ընդունեց Գենդերային քաղաքականության հայեցակարգը...

էջ 3



Անվճար հավելված

Փաստաշար

Սպառնալիք ժողովրդավարությանը

Լիդիա Էրը

Քաղաքական կյանքում կանանց անբավարար ներկայացվածությունը սպառնում է ժողովրդավարության լեգիտիմությանը: Ողջ աշխարհի կտրվածքով իրավիճակը մնում է ծանր. կանանց թիվը խորհրդարաններում 20%-ից ցածր է, երկրների ղեկավարների թվում՝ 5%-ից պակաս... Նույն պատկերն է գործադիր իշխանության մակարդակում. աշխարհում նախարարական պորտֆելների միայն 16%-ն է պատկանում կանանց և 190 երկրների կառավարություններից միայն ութն են ղեկավարում կանայք (4,2%):

Այս տվյալները ԵԽԽՎ ծմեռային նստաշրջանում ներկայացրեց Տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների հանձնաժողովի զեկուցող Լիդիա Էրը (Լյուքսեմբուրգ)՝ «Ընտրական համակարգերի միջոցով կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում բարձրացնելու վերաբերյալ» զեկուցման մեջ:

26 եվրոպական կոմիսարները

Փետրվարի 9-ին Եվրախորհրդարանը հաստատեց Եվրահանձնաժողովի նոր կազմը, որը ձևավորվել է նրա նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի կողմից:

Եվրահանձնաժողովականներից յոթը Բարոզուի տեղակալներն են, որոնցից երեքը կին են, ներառյալ առաջին տեղակալը՝ բրիտանացի Քեթրին Էշթոնը, որը միաժամանակ Միջազգային գործերով և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչն է: Ընդամենը Եվրահանձնաժողովի նոր կազմում հինը կին կա՝ մեկով ավելի, քան նախորդում:

Նշենք, որ Եվրախորհրդարանում կանանց ներկայացվածությունը 35,2% է, նրանք զբաղեցնում են 736 տեղերից 259-ը:

Պեկին պլյուս 15

Մարտի 1-12-ը Նյու Յորքում կանցկացվի ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանը, որը կամփոփի Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման տասնհինգ տարիների արդյունքները: 1995-ին Պեկինում ընդունված այս ծրագրային փաստաթուղթը, ինչպես հայտնի է, կոչված է բարելավելու կանանց վիճակը աշխարհում: Ավանդույթի համաձայն՝ համաժողովին մասնակցում են ոչ միայն պետական պատվիրակություններ, այլև կանանց կազմակերպությունների ներկայացուցիչներ ողջ աշխարհից: Նշենք, որ ներկայումս Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի ղեկավար բյուրոյի նախագահն է ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Կարեն Նազարյանը:

Փետրվար, 2010

Եվրոպայի խորհրդում սեռերի իրավահավասարությանը խստորեն են հետևում: Բավական է հիշել ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության փորձից մի օրինակ: Ինչպես հայտնի է, սկզբում նրա կազմում միայն տղամարդիկ էին, սակայն երբ կանանց ներկայացվածությունը պատվիրակություններում դարձավ բոլորի համար պարտադիր պահանջ քվեարկության իրավունքից զրկվելու այլընտրանքով, այս գործելաոճը վերանայվեց: Այսօր ԵԽԽՎ-ում մեր պատվիրակության կազմը կարող է ծառայել իրավահավասարության նմուշ կամ գրեթե նմուշ: Նրա ութ անդամներից երեքը կին են:

Ի դեպ, Վեհաժողովի 47 ազգային պատվիրակություններից միայն 11-ն են կանայք ղեկավարում, իսկ ԵԽԽՎ ողջ պատմության ընթացքում նրա 25 նախագահներից միայն մեկն է կին եղել:

Նաիրա Զոհրաբյան

Զարուհի Փոստանջյան

Հերմինե Նաղդալյան

Նվազագույնը 40% կանայք «կայծակի» սկզբունքով՝

այս նշաձողն է սահմանում ԵԽԽՎ-ն

Այս տարվա հունվարի վերջին Ստրասբուրգում կայացած ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանում քննարկված ««Ընտրական համակարգերի միջոցով կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում բարձրացնելու վերաբերյալ» զեկույցը գրեթե աննկատ մնաց հայ քաղաքական շրջանակների համար: Մինչդեռ այն ուղղակիորեն վերաբերում էր կուսակցությունների ամենացավոտ խնդրին՝ ընտրական ցուցակների ձևավորման սկզբունքներին: Վերը նշված զեկույցի քննարկման արդյունքում ընդունված ԵԽԽՎ հանձնարարականներով առաջարկվում է կտրուկ բարձրացնել կանանց ներկայացվածությունը քաղաքական Օլիմպոսում՝ կուսակցական ցուցակներում քվոտաներ կիրառելու միջոցով: Իդեալում պահանջվում է ապահովել՝ նվազագույնը 40% կանայք, ընդ որում՝ «կայծակի» սկզբունքով: Խոսքը ցուցակներում թեկնածուների՝ մեկ կին, մեկ տղամարդ հերթագայման մասին է:

Այսպես կոչված դրական խտրականության գաղափարը, որի ամենատարածված ու հայտնի արտահայտությունը կանանց համար ժամանակավոր քվոտաներն են, վաղուց է օգտագործվում եվրոպական ընտրական պրակտիկայում: Դրանց հետ մեկտեղ լայն տարածում է գտել նաև «կայծակի» սկզբունքը, որի կիրառումը պայմանավորված է նրանով, որ սոսկ քվոտաների ներդրմամբ արդյունքի չեն հասնի, քանի որ քվոտավորված կանանց կարող են ընդգրկել ցուցակների ոչ անցողիկ տեղերում: Ոչ վաղ անցյալում մենք նման նախադեպ ունեցել ենք, երբ մեր ընտրական օրենսգրքում գործում էր կանանց համար 5%-անոց քվոտան, սակայն նրանք բարեհաջող կերպով եզրափակում էին ցուցակները: Արդյունքում՝ խորհրդարան էր անցել ընդամենը 4 կին, ինչը աղետալիորեն ցածր ցուցանիշ է: 2007-ի խորհրդարանական ընտրություններում օրենքում ամրագրվեց արդեն 15%-անոց քվոտան կանանց համար, ընդ որում՝ վերապահումով, որ կուսակցական ցուցակներում նրանք պետք է ներկայացված լինեն ոչ պակաս, քան յուրաքանչյուր տասներորդը: Արդյունքն ավելին էր, քան նախորդ գումարման ժամանակ, սակայն ավելի ցածր, քան ներմուծված քվոտան՝ ընդամենը 12 կին 131 պատգամավորից, այսինքն՝ 9,2%: Համեմատության կարգով. միապալատ խորհրդարաններում կանանց ներկայացվածության համաշխարհային միջին ցուցանիշը այսօր 18,9% է, իսկ Եվրոպայում՝ 22%:

Խնդիրը սակայն մեզ համար դեռևս անհասանելի թվերը չեն, այլ անհասկանալի մեխանիզմները, որոնց օգնությամբ կանանց մի մասը չի մտնում խորհրդարան նույնիսկ այն դեպքում, եթե կուսակցությունները, որոնց ցուցակներում նրանք ներկայացված են, հաղթահարում են ընտրական շեմը: Այս մեխանիզմները գործի են դրվում ընտրությունների ավարտից հետո մանդատների բաշխման ժամանակ կամ Ազգային ժողովում թափուր տեղերի առաջացման դեպքում: Դիցուք՝ երբ թափուր տեղի լրացման համար հերթը ցուցակում հասնում է կին թեկնածուին, նա հանկարծ իր դիմումի համաձայն հրաժարվում է մանդատից՝ իր տեղը զիջելով կուսակցական չափանիշներով ավելի արժանավոր տղամարդուն: Այս գործելաոճը կարելի էր վերագրել կուսակցական խոհանոցի գաղտնիքներին, եթե այն չվերածվեր կայուն սովորույթի: Ընդհանուր առմամբ Աժ ներկայիս գումարման սկզբից մանդատներից հրաժարվել են իրենց կուսակցությունների ցուցակներում ներկայացված մոտավորապես 7-8 կին:

Կուսակցական կանայք նախընտրում են այս խնդիրը լռության մատնել: Այս ակնհայտ անարդարության մասին քանիցս բարձրաձայնել են միայն կանանց հասարակական կազմակերպությունները: Ավելին՝ անցյալ տարի հանդես գալով ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան բարձրացնելու առաջարկությամբ (15%-ից մինչև 30%՝ յուրաքանչյուր երրորդը սկզբունքով), նրանք մատնանշել են նաև մանդատներից անհայտ պատճառներով հրաժարվելու անընդունելի պրակտիկան:

Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին օրինագծում, որը կառավարությունը պատրաստվում է ներկայացնել խորհրդարանի քննարկմանը այս տարի, առաջարկվում է ներմուծել 25%-անոց քվոտա կանանց համար՝ յուրաքանչյուր չորրորդը սկզբունքով: Ու թեպետ սա հեռու է Եվրոպայի խորհրդի սահմանած նվազագույն՝ 40%-ից, Վեհաժողովի հանձնարարականները ուժեղ փաստարկ են առաջարկվող օրինագծի ընդունման հավանականությունը կտրուկ բարձրացնելու համար:

Ի դեպ, ԵԽԽՎ հանձնարարականները տարածվում են նաև մեծամասնական ընտրակարգի վրա. կուսակցություններին առաջարկվում է աջակցել միամանդատ ընտրատարածքներում երկուական թեկնածուի՝ մեկ կնոջ ու մեկ տղամարդու:

Հայ քաղաքական իրողությանը նույնիսկ հպանցիկ հայացք գցելիս պարզ է դառնում, որ Եվրոպայի խորհրդի առաջադրած նշաձողը մեր կուսակցությունների համար առայժմ ուժերից վեր է: Հիմնականում՝ երկու պատճառով: Նախ՝ ներկուսակցական ժողովրդավարության պակասի, առանց որի անհնար է կանանց առաջխաղացումը: Եվ երկրորդ՝ բարձր քվոտաներ ներմուծելիս կուսակցություններում անխուսափելիորեն առաջանում է կանանց կադրերի պակասի լուրջ խնդիր:

Գաղտնիք չէ, որ կուսակցությունները հաճույքով օգտագործում են կանանց ռեսուրսը կազմակերպչական նպատակներով, սակայն դրա հետ մեկտեղ բացարձակապես հոգ չեն տանում նույն այդ կանանց քաղաքական պատրաստվածության մակարդակի մասին: Ու նման իրավիճակը միանգամայն ձեռնտու է քաղաքական այրերին, որոնք չեն ցանկանում իրենց նեղություն տալ կին մրցակիցներով: Այստեղից էլ, ի դեպ, այն մտավախությունը, որ քվոտաները ոչ միայն «կբուժեն» կուսակցությունները գենդերային անհաշվեկշռից, այլև կառաջացնեն նոր ախտեր՝ հեշտ կառավարվող կանանց առաջ մղելու տեսքով: Սակայն նույնիսկ այդ պարագայում չի նվազում քվոտաների՝ որպես միակ արդյունավետ դեղամիջոցի անհրաժեշտությունը: Եվ կուսակցությունները, ուզեն-չուզեն, որոշակի ժամանակահատվածում պետք է այն ընդունեն: Այնքան ժամանակ, մինչև հասարակության ընկալման մեջ ու կուսակցական համակարգում կվերացվեն կանանց քաղաքական առաջխաղացման բոլոր արգելքները: Իսկ քվոտաներից ծնունդ առած հիվանդությունները, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, հաղթահարվում են քանիցս իրեն արդարացրած բանաձևով, այն է՝ քանակից նոր որակի անցման:

Թամարա Հովնաթանյան

Անոնս

Առաջարկում ենք շարունակել քվոտաների մասին զրույցը և հրավիրում ընթերցողներին «Քվոտաներ. կողմ և դեմ» թեմայով բանավեճի:

Գրե՛ք մեզ այս հասցեով. promediagender_arm@yahoo.com

Մրցույթ

«Նա/Նե» արծաթե արձանիկը գտավ նրանց,

ովքեր ուշադրության էին արժանացրել կանանց

Այն խորհրդանշում է Նա-ին և Նե-ին՝ տղամարդուն ու կնոջը, և կենաց ծառը, որը ծուլված է խոսափողի տեսքով:

Փետրվարի 2-ին Երևանում անցկացվեց ավանդական դարձած լրագրողական աշխատանքների «Նա/Նե» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողությունը: Մրցույթը, ինչպես հայտնի է, կազմակերպվում է երկրորդ անգամ Բրիտանական խորհրդի՝ Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանության ֆինանսավորմամբ իրականացվող «Wo/men in Politics» ծրագրի շրջանակում, և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համատեղ ջանքերով:

Մրցույթին ներկայացվել էին հայաստանյան տպագիր և հեռարձակող լրատվամիջոցների մոտ 70 աշխատանքներ վեց անվանակարգերում՝ հեռուստատեսային նյութ, տպագիր հոդված, առցանց (online) հոդված, բլոգ հոդված, ռադիո նյութ, առևտրային գովազդ:

Մրցույթի արդյունքներով «Բլոգ հոդված» անվանակարգում առաջին մրցանակը հանձնվեց blog.banadzev.com-ի ներկայացուցիչ Արտակ Վարդանյանին՝ «Կույս Սոնյան, որ խփնվածի մեկն էր» հոդվածի համար: «Լավագույն հեռուստահաղորդում» անվանակարգում պարգևատրվեց Սանե Գրիգորյանը («Արտակարգ ալիք»), «Լավագույն ռադիոհաղորդում»՝ Սեդա Պապոյանը («Մաքս լիբերթի»):

«Տպագիր հոդված» անվանակարգում առաջին մրցանակակիր չկար, երկրորդ տեղը կիսեցին լրագրողներ Լիլիթ Քոչինյանը «Կանայք, ում վստահել են ղեկը» («Կինը և քաղաքականությունը» ներդիր) և Անի Մաթևոսյանը «Կինը= տղամարդ =մարդ» («Տեսակետ» հանդես) հոդվածների համար:

«Ինտերնետային հոդված» անվանակարգում առաջին և երկրորդ մրցանակակիրներ չկային, երրորդ տեղը համապատասխանաբար կիսեցին www.armenianow.com և www.hetq.am էլեկտրոնային հանդեսների ներկայացուցիչներ Գայանե Մկրտչյանն ու Ոսկեհատ Իսախանյանը:

Լավագույն առևտրային գովազդ ճանաչվեց «Ինեկոբանկի» տեսահոլովակը՝ պատրաստված «Persona Grata» գործակալության կողմից:

Մրցույթի կազմակերպիչները խրախուսական մրցանակ հանձնեցին «Առավոտ» թերթին՝ իր էջերում կանանց հիմնախնդիրներին և կանանց գործունեությանը հաճախակի անդրադառնալու համար:

Միջոցառման պատվավոր հյուրերից էին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանը Հայաստանում՝ Չարլզ Լոնսդեյլը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը, ինչպես նաև պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Շնորհավորում ենք բոլոր մրցանակակիրներին:

Փորձագետի անկյուն

Եղե՛ք իրապես, պահանջե՛ք անկարելին

քանի որ միայն անկարելիի պահանջն է ապահովում շարժումը դեպի առաջ

Այսպիսի խորհուրդ է տալիս կին-թեկնածուներին մեր զրուցակիցը՝ քաղաքագիտության դոկտոր Սվետլանա Այվազովան: 2003-ին Ռուսաստանի Պետդումայի նախընտրական քարոզարշավի ընթացքում նա աշխատել էր որպես իմիջմեյքեր մի խումբ կանանց հետ՝ նրանց ընտրություններին նախապատրաստելու նպատակով: Խումբը մեծ չէր՝ ընդամենը 12 խիստ ակտիվ, բայց կուսակցություններում չընդգրկված կանայք՝ ՀԿ-ների ներկայացուցիչներից: 12-ից հինգը հետագայում հաջողության հասան տարբեր մակարդակների ընտրություններում:

Փորձագետի այցեքարտ
Սվետլանա Այվազովան քաղաքագիտության դոկտոր է, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ՌԴ նախագահին կից քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների զարգացման աջակցության խորհրդի անդամ: Զբաղվում է կանանց շարժման պատմությամբ և տեսությամբ զարգացած ժողովրդավարություններում և Ռուսաստանում:

Տղամարդկանց նման հարցեր չեն տալիս

- Մեր հիմնական նպատակն էր ընդլայնել դեպի իշխանություն գնացող կանանց քաղաքական հորիզոնը: Չէ՞ որ մեզանում չկա կանանց քաղաքական պատրաստվածությունն ապահովող համակարգ որպես այդպիսին,- պատմում է Սվետլանա Այվազովան: - Որպես կանոն՝ երբ կանայք իրենց առաջադրում են ընտրություններում, և լրագրողներն սկսում են նրանց հետ աշխատել, նրանց իսկույն հարցնում են. «Ինչպե՞ս է Ձեզ հաջողվում համատեղել ընտանիքն ու հասարակական գործունեությունը»: Տղամարդկանց նման հարցեր չեն տալիս: Ինչո՞ւ Ժիրինովսկուց ոչ ոք չի հարցնում, թե նա ինչպես է գլուխ հանում իր թոռներից կամ ինչպես է մեծացրել սեփական որդուն: Կանանց շարունակ նման հարցեր են տալիս. ուտեստների մասին, որոնք նրանք սիրում են պատրաստել, ո՞ւմ մոտ են մազերը հարդարում, ո՞ւմ մոտ հագնվում և այլն: Կամ՝ Ձեզ ինչպե՞ս է հաջողվում այդքան երիտասարդ տեսք ունենալ:

Մենք սովորեցնում էինք կանանց ի պատասխան նման հարցադրումների՝ փոխել զրույցի թեման և հանդիպակաց հարց ուղղել. «Իսկ դուք չե՞ք ցանկանում ինձ հարցնել, թե ես ի՛նչ կարծիքի եմ կառավարության տնտեսական քաղաքականության մասին»: Դրանով իսկ փորձում էինք կոտրել կին քաղաքական գործիչների նկատմամբ կարծրատիպային մոտեցումները, որոնք բավական լայն տարածում ունեն լրագրողների մոտ: Եվ այդ պատճառով մենք լրջորեն պատրաստում էինք մեր կանանց քաղաքական ու տնտեսական հիմնախնդիրների, օրենսդրության, իրավունքի հարցերով...

Ինչպես դիմանալ մրցակցությանը

- Չպետք է մոռանալ, որ այսօր քաղաքականությունն աշխատանքի շուկայի այն հատվածն է, որում գործում է ամենաուժեղ մրցակցությունը: Այստեղ լուրջ կարիերա անելու համար կինը պետք է օժտված լինի ոչ թե հավասար, այլ տղամարդ-մրցակիցներից շատ ավելի արժանիքներով:

Սկզբի համար կանանց չեն բավարարում քաղաքական գիտելիքները, ու մենք փորձում էինք լրացնել հենց այդ բացը: Դասընթացը ներառում էր մամուլի ասուլիսներ հեռուստախցիկի առաջ: Մեկ շաբաթ յուրաքանչյուր ունկնդրի հետ աշխատում էին ռեժիսորն ու օպերատորը. ցույց էին տալիս, թե ինչպես հեռուստահարցազրույցի ժամանակ յուրաքանչյուր շարժում կամ յուրաքանչյուր հնչերանգ ազդում են այն կերպարի վրա, որն առաջանում է հեռուստադիտողի մոտ: Սա անհատական և խիստ աշխատատար գործ է, ինչը, ի դեպ, բացատրում է, թե ինչո՛ւ էր ընտրվել նման փոքր խումբ:

Ռադիոհարցազրույցի ժամանակ նրանց սովորեցնում էին, թե ինչպես պետք է տիրապետել իր ձայնին, ինչ տոնով խոսել: Մենք ուշադրություն էինք դարձնում ամեն մանրուքի: Բացատրում էինք, որ ելույթը խրատական տոնով սկսելու և մենթորի դերում հանդես գալու դեպքում շատ հավանական է, որ հեռուստադիտողն իսկույն կփոխի ալիքը, քանի որ չի ցանկանա հերթական հորդորը լսել: Կամ՝ ինչպե՞ս ստեղծել վստահության մթնոլորտ: Ահա այս հարցերում է հաճախ անհրաժեշտ մասնագետի օգնությունը:

Իմիջմեյքերը միշտ կշտկի թե՛ կերպարը և թե՛ մթնոլորտը

- Մեր ունկնդիրներից մեկը, ի դեպ՝ բավական փորձառու, հետագայում նա հաղթեց ընտրություններում, խելացի մտքեր էր արտահայտում, այն էլ՝ պրոֆեսիոնալ քաղաքական գործչի ձայնով, բայց դրա հետ մեկտեղ նրա հագնվելու ոճը ավելի շատ ասոցիացվում էր, կներեք, թեթևաբարո կնոջ կերպարի հետ: Մարդիկ նրան պարզապես չէին հավատում. նման արտաքին տեսքով կինը չի կարող այդպիսի խելոք բաներ ասել: Մենք այս պահը նրա մոտ շատ նրբորեն վերացրինք:

Կամ՝ մեր ունկնդիրների մեջ կար մի տաղանդավոր կին, որը հետագայում նույնպես կարողացավ իրեն դրսևորել: Սակայն նա շատ արագ էր խոսում: Խելացի ու անսովոր մտքեր էր արտահայտում, բայց այնքան արագ, որ ոչ ոք չէր կարողանում որսալ դրանց իմաստը: Հարցնում էինք. ինչո՞ւ այդքան արագ: Պարզվում է՝ ամուսինը միշտ խորհուրդ է տվել. «Բերանդ արագ փակիր»: Բանն այն է, որ նրա մի ատամը ծուռ էր աճել, ու նա միշտ ենթագիտակցորեն ձգտում էր թաքցնել դա՝ որքան հնարավոր է արագ բերանը փակելով, որպեսզի ոչ ոք չնկատի: Բժշկի մոտ մի թեթև վիրահատություն, և մի քանի տարի անց նրան հանդիպելով՝ ես նկատեցի, որ նա լրիվ այլ կերպ է խոսում: Ահա այսպիսի անսպասելի պահեր կարող են խանգարել կանանց:

Ռուայալ, Քլինթոն... ընդօրինակելու համար օրինակներն ավելի են շատանում

- Իմ կարծիքով՝ ամենաուսանելին Մարգարետ Թեթչերի օրինակն է, որն ի դեպ գենդերային իրավահավասարությունից հեռու էր: Նա շատ լրջորեն էր վերաբերվում իր քաղաքական կարիերային: Սկսել էր ոչ այնքան հաջող, բայց, այնուամենայնիվ, առաջ էր գնում՝ հենվելով կամքի ուժի և հսկայական գիտելիքների վրա: Ինչ-որ մի շրջան նա սկսում է աշխատել հինդուս իմիջմեյքերի հետ, որը խորհուրդ է տալիս Թեթչերին ընդգծել շրթունքները: Նա աշխատում է տղամարդկանց աշխարհում, իբրև կին պետք է հրապուրիչ լինի, բայց և միաժամանակ իրեն պահի և մտածի տղամարդու պես: Հետևելով այս խորհրդին՝ նա տարիներով մշակեց իր կերպարը: Բանակցությունների սեղանի շուրջը բոլորը տեսնում էին հրապուրիչ, մեղմ կնոջը, որը խոսում էր խիստ բաներ:

Ինչ վերաբերում է Սեգոլեն Ռուայալին, ապա նա, իմ կարծիքով, իր քարոզարշավի ընթացքում գործեց մի քանի վրիպումներ: Կանացիությունն և լուրջ քաղաքական մոտեցումների միջև նա չկարողացավ ապացուցել իր լրջությունը: Նա չափից ավելի կանացի էր և տանուլ տվեց: Տանուլ տվեց Սարկոզիին այն պատճառով, որովհետև վերջինս կարողացավ ընտրական քարոզարշավի ընթացքում վերակողմնորոշվել, նրա բոլոր կարգախոսներին տիրանալ, իսկ հետո ապահովել Նախարարների կաբինետում կանանց պատկառելի ներկայացվածություն: Ֆրանսիայի կառավարությունում այսօր նախարարների 50%-ը կանայք են: Ու ընտրողի համար դա շահեկան էր. ավանդաբար ընտրել տղամարդուն, սակայն՝ ազատամիտ: Իսկ Ռուայալը չկարողացավ ժամանակին չեզոքացնել նրա քարոզարշավում այդ շրջադարձը: Սակայն դա իրոք խիստ դժվար էր:

Երկու կարծրատիպերից գենդերայինն ավելի ուժեղ է

- Հաղթահարման իմաստով ամենադժվարը գենդերային կարծրատիպն է: Այն ավելի ծանր է, քան ռասայականը: Ու դա շատ լավ տեսանելի էր ԱՄՆ նախագահական ընտրություններում: Ես Հիլարի Քլինթոնին խորին հարգանքով եմ վերաբերվում, քանի որ նրան ծանր բաժին է ընկել՝ ամուսնու ձեռքբերումների ու անհաջողությունների բեռը: Օբամայի դեպքում անցյալը չկար, նրա հաղթաթուղթը ապագան էր:

Այդուհանդերձ, Օբաման նույնպես շատ կարևոր կարծրատիպ էր հաղթահարում. ճանապարհ հարթել դեպի իշխանություն ոչ սպիտակ ռասայի ներկայացուցչի հսամար: Երկուսն էլ համադրելի էին այն իմաստով, որ ո՛չ կանայք, ո՛չ էլ աֆրոամերիկացիները երբեք ներկայացված չեն եղել բարձրագույն պաշտոնում: Դրա հետ մեկտեղ՝ Օբաման երիտասարդ էր ու շարժուն, իսկ Քլինթոնին իր ամուսնուց չէին բաժանում: Դա նրան այդպես էլ չհաջողվեց, թեև նա ջանում էր: Իսկ Օբաման կոտրեց կարծրատիպը: Սակայն դա ահավոր բարդ է:

Ուստի չի կարելի Հիլարիին անհաջողակ համարել, նրա առջև ծառացած էր գերբարդ խնդիր: Բացի այդ, նա այնուամենայնիվ վերացրեց տաբուն. այլևս հարկ չի լինի ընտրողին ապացուցել, թե կինը չի կարող լինել նախագահի թեկնածու, ընդ որում՝ հաջողությունից ընդամենը մեկ քայլում:

Յուրաքանչյուր նոր կին հարթում է իր հետևից եկող կնոջ ճանապարհը

- Մեզ մոտ՝ Ռուսաստանում, կանայք չորս անգամ են առաջադրել իրենց թեկնածությունը նախագահական ընտրություններում: Առաջինը 96-ին Գալինա Ստարովոյտովան էր, որը չկարողացավ նախնական ձայներ հավաքել և չգրանցվեց: Նրան հետևեց Էլլա Պանֆիլովան, որն ստացավ 2% ձայն: Այնուհետև 2004-ին Իրինա Խակամադան էր, որը ստացավ 4,7% ձայն: Ընդ որում, նրա համար իրավիճակը լավագույն ձևով չդասավորվեց, քանի որ խորհրդարանական ընտրություններում նրա կուսակցությունը՝ Աջ ուժերի միությունը, պարտվեց: Ավելին՝ համաձայնություն չկար նույնիսկ կուսակցության կողմից, որ նա առաջադրվեր, և նա հենվում էր լրիվ այլ ուժերի վրա: Այդուհանդերձ, նա չցանկացավ կամ չկռահեց աջակցության խնդրանքով դիմելու կանանց կազմակերպություններին:

2008-ի նախագահական ընտրություններում ոչ մի կին չհամարձակվեց առաջադրվել: Միակ կինը, որին ԶԼՄ-ները համարում էին ռեալ թեկնածու, Վալենտինա Մատվիենկոն էր, որն իրոք հզոր ռեսուրս ունի և լավ քաղաքական կենսագրություն: Սակայն նա չհամարձակվեց ռիսկի դիմել և մտնել ի սկզբանե պարտության դատապարտված քարոզարշավի մեջ: Սա նաև ցուցիչ է, թե ինչպես է փոխվում ենթատեքստը: Որքանով այն բարենպաստ է կանանց առաջադրման համար և որքանով նրանց դեմ է գործում: Ուստի ես չգիտեմ, թե ի՛նչ կլինի հաջորդ ընտրություններում:

Կանայք չեն առաջադրվում, ուրեմն ենթատեքստը ծանր է

- Այ դուք ասում եք, թե Հայաստանում կանայք երբեք չեն առաջադրվել նախագահի պաշտոնում: Կնշանակի՝ ձեզանում ենթատեքստը ծանր է: Երբ կանայք քիչ են խորհրդարանում ու կառավարությունում, սա ստույգ ախտանշան է, որ հասարակարգը հայրիշխանական է, ագրեսիվ: Բայց, այնուամենայնիվ, ինձ թվում է, որ Հայաստանում տեղի են ունենում խիստ կարևոր գործընթացներ գենդերային հավասարության գաղափարի առաջ մղման տեսանկյունից: Գուցե սա չի նկատվում մասնակիցների համար, սակայն կողքից ավելի ակնհայտ է: Տեղաշարժեր են տեղի ունենում, և հասարակական գիտակցությունը համակերպվում է այն մտքին, որ իշխանությունում պետք է կանայք լինեն:

Կին թեկնածուների հաջողության բանաձևը

- Տարբեր հասարակություններում այն տարբեր է: Եթե հասարակությունը նահապետական է, ապա չարժի, որ կինը կտրվի հոգածության էթիկայից, որը բնորոշ է մոր գործառույթներին, այսինքն՝ պետք է ներկայանա ընտրություններում որպես մայր, որը պատասխանատու է այդ երկրի զավակների ապագայի համար: Համարվում է, որ արդարությունը տղամարդկային գիծ է, իսկ հոգատարությունը՝ կանացի էության հատկանիշ: Ու պետք է առաջնորդվել դրանով: Ճգնաժամից հոգնած մարդիկ հոգատարության այդ էթիկան և դրանից բխող հույսերը անկասկած դրական կընկալեն: Մնում է մշակել և՛ ձայնը, և՛ կերպարը՝ համապատասխանեցնելով հոգատարության այդ էթիկային: Ու միշտ հիշել, որ քաղաքականությունը լուրջ է և տանջալից ուղի է:

Քաղաքականության մեջ կնոջ համար գլխավորը չվախենալն է:Ժամանակին ֆրանսիացի ֆեմինիստուհիները նման կարգախոս ունեին՝ «Համարձակվել պայքարել»:

Զրուցեց
Թագուհի Հարությունյանը

Քաղաքական խոհանոց

Հայաստանի կառավարությունն ընդունել է, որ մեզանում կա կանանց նկատմամբ խտրականություն



Փետրվարի 11-ին Հայաստանի կառավարության նիստում, ի վերջո, հավանության արժանացավ Գենդերային քաղաքականության հայեցակարգը, որն ուղղված է երկրի հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում բոլոր քաղաքացիների համար, անկախ սեռից, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Սեռերի նկատմամբ կոռեկտ այս ձևակերպումն ըստ էության հաստատում է այն փաստը, որ կանայք, չնայած Սահմանադրությամբ հռչակված տղամարդկանց հետ հավասար իրավունքներին, հաճախ ենթարկվում են խտրականության այդ իրավունքների իրացման հնարավորությունների իմաստով: Ինչպես նիստի ընթացքում ընդգծեց հայեցակարգը ներկայացնող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մխիթար Մնացականյանը, հայեցակարգն ուղղված է խտրականության բոլոր ձևերի վերացմանն ու հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի բարձրացմանը:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, իր հերթին նշեց, որ հայեցակարգի հիմնական նպատակներից մեկը հայ կանանց քաղաքական մասնակցության բարձրացումն է, մասնավորապես որոշումների կայացման մակարդակում կանանց թվի ավելացումը: «Այս խնդրի վրա պետք է հրավիրել հատկապես քաղաքական կուսակցությունների ուշադրությունը, որոնք պետք է մտածեն իրենց նախընտրական ցուցակներում ավելի մեծ թվով կանանց ընդգրկելու մասին», - ասաց վարչապետը՝ ընդգծելով, որ այս բնագավառում հայաստանյան ցուցանիշները բարելավման կարիք ունեն, քանի որ «մեր պետական և հանրային կյանքում լիակատար չափով չի օգտագործվում կանանց ներուժը»:

«Թեև վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ, օրինակ՝ աղջիկներն ավելի լավ են սովորում, քան տղաները, բուհերում 10 գերազանցիկներից ինը աղջիկ են: Սակայն այս հանգամանքը չի անդրադառնում տղաների՝ բարձր պաշտոնների ձգտման վրա»,- նկատեց Տիգրան Սարգսյանը:

Ի հավելումն հայեցակարգի՝ կառավարությունը պարտավորեցրեց բոլոր շահագրգիռ գերատեսչություններին վեցամսյա ժամկետում մշակել 2010-2015 թթ. միջոցառումների ծրագիր:

Ենթադրվում է, որ հայեցակարգի ուղղությամբ հաջորդ քայլը կանի երկրի խորհրդարանը՝ ընդունելով տղամարդկանց ու կանանց համար հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների երաշխիքների մասին օրենք: Ի դեպ, այս օրենքի ընդունումը դեռ անցյալ տարի էր ներառվել ՀՀ նախագահի կարգադրության մեջ՝ Եվրոպական հարևանության գործողությունների ծրագրի միջոցառումների վերաբերյալ:

No comment

Որտե՞ղ է կնոջ տեղը: Եվ ո՞վ է այն որոշում

Ի՞նչ են մտածում երիտասարդները ընտանիքում և հասարակական կյանքում կնոջ տեղի ու դերի մասին: Կարծիքները միայն առաջին հայացքից են բազմազան թվում: Իրականում կա միայն սեփական ապագայի պրիզմայով խնդրին անդրադառնալու փորձ, ու դա ինքնին դրական է: Եվ կա պատանեկան մաքսիմալիզմ, որը չի ընդունում ոսկե միջինը: Առայժմ չի ընդունում:

Արսեն Բաբայան,
ճարտարապետ, 23 տարեկան
Կանանց պետք չէ՞ ղեկավար պաշտոններ տալ

Ես դեմ չեմ կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարությանը: Ընդհակառակը, նույնիսկ հետաքրքիր է, երբ կյանքում տղամարդու պրագմատիզմը զուգակցվում է կնոջ ինտուիցիայի հետ: Միայն մեկ «բայց». կնոջը երբեք չպետք է ղեկավար պաշտոններ տալ: Ինչո՞ւ: Որովհետև կանայք, հավանաբար, այնպես են ստեղծված, որ երբ զգում են իրենց գերազանցությունը բոլորի նկատմամբ, հատկապես՝ տղամարդկանց, «կորցնում են արգելակները»: Ես չեմ պատրաստվում բացատրել այս ֆենոմենը, սակայն փաստերը հավաստում են ասվածը:

Օրինակ՝ հենց մեր նախագծային բաժնում, որտեղ ես եմ աշխատում, կին ղեկավար նշանակեցին, և տղամարդիկ գրեթե ֆիզիկապես սարսափելի անհարմարավետություն զգացին (երեք չծխող տղամարդկանցից երկուսը սկսեցին ծխել)... Հաճելի, բարեհամբույր կնոջից մեր «շեֆը» վերածվեց Մեգերայի: Ենթադրում եմ, որ սա միակ ու պատահական դեպքը չէ: Ու չեմ կարծում, թե նման կերպարանափոխության կարող է ենթարկվել տղամարդը:

Ելենա Սարաջևա, ուսանողուհի,
17 տարեկան
«Մեր ընտանիքում գլխավորը տատիկն է»

Մեր ընտանիքը բավական մեծ է՝ 8 անձ: Ամենամեծը տատիկս է: Նա 92 տարեկան է: Չնայած տարիքին՝ նա հիանալի հիշողություն ունի, հատկապես՝ դեմքերը և թվերը: Նա լավ է հիշում իր բոլոր հարազատների ծննդյան օրերը, և ամեն անգամ, երբ որևէ մեկի ծնունդն է, մենք բոլորս հավաքվում ենք միասին ու նշում: Ու ինչն է հետաքրքիր. բոլորը տանն ընդունում են տատիկին որպես գլխավոր. հարցնում են նրա կարծիքը ամեն ինչում, իսկ ինչ-որ կարևոր որոշում ընդունելիս անպայման խորհրդակցում են նրա հետ: Բացի այդ, տատիկի բջջայինում կան մեր բոլորի հեռախոսահամարները:

Ինչ վերաբերում է հորս, ապա մի անգամ ես հարցրի նրան, թե այդ ինչպե՞ս է, որ նա, լինելով բավական հայտնի ֆիրմայի պետ, ամբողջությամբ ենթարկվում է իր մոր «հրամաններին»: Հայրս ասաց, որ այդպիսի վարքագիծը բնական է, և Հայաստանում վաղուց ընդունված է, որ այն ընտանիքում, որում չկար ընտանիքի գլխավորը, առաջնությունը մնում էր նրա կնոջը, այսինքն՝ տվյալ դեպքում իմ տատիկին: «Մենք հարգում ենք նահապետական հայկական ընտանիքի ավանդույթները»,- հպարտությամբ ասաց հայրս:

Արթուր Գոմցյան, ֆիզիկոս,
19 տարեկան
Ընտանիքում ինչպես ռազմի դաշտու՞մ

Ես չէի ուզի, որ իմ ապագա կինն ընտանիքում ունենա նույն իրավունքները, ինչ ես: Կինը պետք է իմանա իր տեղը: Սա իմ սկզբունքային դիրքորոշումն է: Ու ես գիտեմ, ինձ շրջապատող մարդկանց փորձն է ցույց տվել, այն տարածքը, որտեղ տղամարդիկ հանդես են բերում անփութություն և անորոշություն, ականապատվում է կնոջ կողմից: Որովհետև կանանց բնորոշ են ամեն ինչ իրենց ձեռքը վերցնելն ու իրենց ենթարկելը: Ահա թե ինչու, իմ կարծիքով, կարևոր է կնոջն ընտանիքում զիջումներ չանել լուրջ խնդիրներ լուծելիս: Կնոջ տեղը խոհանոցն է և անկողինը...

Նունե Մեսրոպյան, բանասեր,
22 տարեկան
Ինչպիսի՞ն է միջին վիճակագրական կնոջ ճակատագիրը

Միջին վիճակագրական հայ կնոջ ճակատագիրն է՝ կրթություն ստանալ, հաջող ամուսնանալ, երեխաներ ունենալ (ցանկալի է՝ երկուսից ոչ պակաս), տեղավորվել միջին վարձատրվող աշխատանքի և այսպես՝ մինչև թոշակ...

Թվում է, թե այսօր կանայք հասարակության մեջ իրենց ավելի ազատ ու անկաշկանդ են զգում: Սակայն դա միայն թվում է, իրականում ազատությունը վերաբերում է միայն տղամարդկանց: Այն կինը, որ փորձում է ինչ-որ կերպ առանձնանալ, կարող է պարզապես առանց ընտանիքի ու երեխաների մնալ: Ասենք, եթե նա դարձել է էստրադային աստղ: Նրան գովում են, նրանով հիանում են, նվերներ անում, ծաղկեփնջեր, սակայն, տղամարդկանց կարծիքով, նման կնոջ հետ տանը ընտանիքում նրանք հանգիստ չեն ունենա:

Կամ՝ մեկ այլ իրավիճակ. բարձրագույն կրթություն ստանալով՝ կինը ցանկանում է արտասահմանում կատարելագործվել: Սակայն ամուսնու ընտանիքում ի պատասխան հարսի նախաձեռնության լրջորեն անհանգստանում են. «Ի՞նչ կրթություն, ի՞նչ բան, նստի՛ր տանն ու երեխա ունեցիր»,- կարգադրում են տան անդամները: Ընտանիքն ու ամուսնուն պահպանելու համար կինը ենթարկվում է նրանց կամքին: Երբ երեխաներ են ծնվում, ուսումը շարունակելու մասին ընդհանրապես մոռանում է:

Ո՞վ է իր կյանքն իր սեփական սցենարով դասավորում: Երևի թե միայն նրանք, ովքեր առաջադեմ հայացքների տեր ծնողներ ունեն, կամ նրանք, ովքեր կամավոր դատապարտում են իրենց «տանը մնացածի» կարգավիճակի՝ նախընտրելով որոշակի բարձունքների հասնել կարիերայում: Տղամարդկանց դուր են գալիս նրանք, ովքեր ավելի պարզ են և ավելի քիչ հավակնություններ ունեն:

Արտեմ Դոլմազյան, իրավաբան,
23 տարեկան
«Պետք չէ, որ կինը տղամարդուց ավելի շատ փող վաստակի»

Տատիկս միշտ ասում էր. «Եթե կնոջն ուսերիդ նստեցնես, ինքը գլխիդ կնստի»: Եվ իրոք, միայն այն ընտանիքներում վեճեր ու կռիվներ չեն լինում, որտեղ կինը գիտի իր տեղը, լսում է ամուսնուն, ձայնը չի բարձրացնում, հոգ է տանում ամուսնու ծնողների մասին, լավ ու մաքրասեր տանտիկին է...

Հայրս միշտ նեղվում էր, որ մայրս ավելի շատ փող էր վաստակում, քան ինքը: Ու կարծում եմ, հենց ադ պատճառով ծնողներս վեց տարով բաժանվեցին: Հիմա մեր ընտանիքում ամեն ինչ կարգավորվել է. մենք վերադարձել ենք հայրական տուն, հայրս սկսել է ավելի շատ փող տուն բերել, իսկ մայրս դարձել է տնային տնտեսուհի. աշխատանքի տեղում նա կրճատման տակ ընկավ: Այսպես էլ ապրում ենք...

Ես հանդիպում եմ մի աղջկա հետ՝ շատ կարգին ու համեստ: Կարծում եմ՝ տատիս խորհուրդներն այստեղ պետք չեն գա: Բայց հորս մի խորհուրդ ես անպայման հետագայում հաշվի կառնեմ. կինը երբեք չպետք է ավելի շատ փող վաստակի, քան ամուսինը:

Արտավազդ Մինասյան,
ծրագրավորող, 23 տարեկան
«Ուզում եմ, որ սրտի թրթիռով սպասի ինձ աշխատանքից»

Ինձ համար շատ հաճելի է, երբ աղջիկները կարող են հավասար խոսել տարբեր թեմաներով և իրենց արժանապատվորեն ու պարզ պահել: Իմ օրինակով գիտեմ, որ բարդ իրավիճակներից ինձ շատ անգամ փրկել են հենց կանայք, որի համար ես նրանց շատ երախտապարտ եմ: Քանիցս համոզվել եմ, որ կինը կարող է լինել հավատարիմ խորհրդատու և հուսալի ընկեր: Իզուր չէ, որ նրանց նույնիսկ ներգրավում են գաղտնի ծառայություններում: Բացի այդ, կանայք բավական տոկուն են, ու, հավանաբար, հենց այդ պատճառով Իսրայելում այսպես կոչված «թույլ» սեռին զորակոչում են բանակ: Ստացվում է՝ կինը կատարելություն է ամեն ինչում և ամենուրեք: Սակայն, ասեմ անկեղծորեն. ես այնուամենայնիվ չէի ցանկանա, որ իմ ապագա կինը ծառայեր գաղտնի ծառայությունում կամ բանակում, կամ լիներ ինչ-որ մեկի խորհրդատուն և հուսալի ընկերը... Ուզում եմ, որ նա պարզապես լինի իմ երեխաների մայրը և ամեն երեկո տանը սրտի թրթիռով սպասի ինձ աշխատանքից:

Զրուցեց Կարի Ամիրխանյանը

Ո՛չ բռնությանը

Օրենսդրության գենդերային փորձաքննության բացահայտումները

Վերջերս ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ «ՀՀ օրենսդրության գենդերային տեսանկյունից փորձաքննության արդյունքները» զեկույցի շնորհանդեսը: Այն պատրաստվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:

Փորձաքննության նպատակն էր քննել, թե որքանով են Հայաստանի ազգային օրենքները համահունչ գենդերային բռնությանն առնչվող միջազգային փաստաթղթերին, իրավական նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև մշակել փոփոխությունների հետ կապված առաջարկությունների փաթեթ, որը հետագայում կներկայացվի ՀՀ կառավարություն:

Փորձաքննության էին ենթարկվել Հայաստանի կարևորագույն իրավական փաստաթղթերը՝ ՀՀ Սահմանադրությունը և մի շարք օրենսգրքեր՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, քրեական և քրեական դատավարության, ինչպես նաև սոցիալական և առողջապահության ոլորտի իրավական ակտեր:

Հետազոտության ընթացքում պարզվեց, որ Հայաստանում գործող օրենսդրական նորմերը միայն ընդհանուր առմամբ են համապատասխանում գենդերային բռնությանն առնչվող միջազգային փաստաթղթերի մոտեցումներին և ոչ բոլոր դեպքերում են պաշտպանություն ապահովում բռնության ենթարկված զոհերի համար: Հատկապես դա վերաբերում է ներընտանեկան բռնությանը, որի զոհ կարող են դառնալ, ի դեպ, ոչ միայն կանայք, այլև տղամարդիկ, երեխաներ, ծերեր...

Այս առումով բացման իր խոսքում ՄԱԿ-ի մշտական համակարգող/ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տկն Դաֆինա Գերչևան նշեց, որ միջազգային փորձը ցույց է տալիս, քանի դեռ օրենսդրության մեջ չի գործում բռնության զոհերի պաշտպանությունն ապահովող պատշաճ իրավական շրջանակ, շատ քիչ բան է հնարավոր իրականացնել բուն երևույթի վերացման ուղղությամբ:

Շնորհանդեսի ընթացքում զեկույցի հեղինակները՝ իրավագետներ Աշոտ Եսայանը, Գեղեցիկ Գրիգորյանը, Միրյանա Դոկմանովիչը և Սիրանուշ Իսկանդարյանը, ներկայացրեցին ազգային օրենսդրությունում գենդերային բռնության տեսանկյունից անհրաժեշտ փոփոխություններին առնչվող հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները: Նշենք, որ ծավալուն այս աշխատանքը Հայաստանի օրենսդրության գենդերային փորձաքննության առաջին փորձերից է:

Ի դեպ, փորձաքննությունն ըստ էության ապացուցեց, որ նրա ընթացքում վեր հանված օրենսդրության մի շարք բացթողումներ հնարավոր կլինի շտկել գենդերային բռնության մասին հատուկ օրենք մշակելու պարագայում, որով կներմուծվեն արդյունավետ կանխարգելիչ և պաշտպանական միջոցներ:

Դիմականյութություն

Ումիդա Ահմեդովա. «Պարզվում է՝ այնքան հեշտ է չեղած փեղը հանցագործ դառնալ»

Այս տարվա փետրվարին Տաշքենդում կայացավ մի դատավարություն՝ ավելի քան տարօրինակ գործով: Դատում էին լուսանկարիչ և կինոօպերատոր Ումիդա Ահմեդովային, որը, իշխանությունների կարծիքով, իր ստեղծագործության մեջ ոտնձգության փորձ է կատարել ուզբեկ ժողովրդի պատվի ու արժանապատվության նկատմամբ: «Դավադրությունը» հայտնաբերվել էր նրա «Տղամարդիկ ու կանայք. լուսաբացից մինչ մայրամուտ» ֆոտոալբոմում, որը լույս էր ընծայվել Շվեյցարիայի դեսպանության գենդերային ծրագրի շրջանակներում:

Այս մեղադրանքը հաստատվել էր փորձագետների կողմից, որոնք աչքի անցկացնելով նրա լուսանկարները՝ հայտնաբերել էին, որ դրանք չափից ավելի հոռետես են, ու դրանով իսկ վնասում են երկրի վարկանիշին: Այս կասկածելի, ինչպես հետագայում պարզվեց, փորձաքննությունը հիմք տվեց Ումիդա Ահմեդովային մեղադրել քրեական օրենսգրքի երկու հոդված՝ «զրպարտություն» և «վիրավորանք» ժողովրդի նկատմամբ: Նրանցով նախատեսվում է առավելագույն պատիժը 2-3 տարով ուղղիչ աշխատանք կամ ազատազրկում մինչև 6 ամսով:

Դատարանը նրան երկու հոդվածներով էլ մեղավոր ճանաչեց, սակայն, ըստ երևույթին, այս գործի շուրջ հարուցված աղմուկի պատճառով երկիրը վերջնականապես չհեղինակազրկելու համար, նրա նկատմամբ իսկույն կիրառվեց համաներում: Բանն այն է, որ ի պաշտպանություն Ումիդայի հանդես եկան միջազգային կազմակերպություններ՝ պրոֆեսիոնալ և իրավապաշտպան: Աշխարհի տարբեր երկրներից ու ԱՄՆ-ից լրագրողներ, լուսանկարիչներ, արվեստաբաններ, նկարիչներ միավորվեցին «Ուզբեկստա՛ն, հպարտացի՛ր Ումիդայով» կարգախոսի ներքո՝ փորձելով իշխանությունների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ իրականում նրա արվեստը ուզբեկ ժողովրդին ոչ թե վիրավորանք է հասցրել, այլ հպարտանալու առիթ է տվել:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ումիդա Ահմեդովայի մի քանի լուսանկարներ հենց նույն՝ «Տղամարդիկ ու կանայք. լուսաբացից մինչ մայրամուտ» ֆոտոալբոմից, որի պատճառով նրա դեմ քրեական գործ հարուցվեց զրպարտության և ազգին վիրավորելու մեղադրանքներով:

«Ես նրան ասացի, թե զբաղվում եմ «ազգագրությամբ»: Նա հարցնում է. «Իսկ էդ ի՞նչ է»: Ես պատասխանեցի. «Իմ ստեղծագործության մեջ ես հիմնականում լուսանկարում եմ ժողովրդական ծեսեր, ավանդույթներ, հարսանիքներ: Մի՞թե դա զրպարտություն է»: Հարցն անպատասխան մնաց»,- սա քննիչի հետ Ումիդայի շփման առաջին փորձից է:

«Ես անչափ երախտապարտ եմ իմ հայրիկին, ով հասկանում և ընդունում էր ինձ, իմ ծնողները քաղքենիական կանոններից վեր էին: Նրանք ընդհանրապես կարծրատիպերի ստրուկ չէին: Երբ ես 1981 թ. Պարկենտում առաջին անգամ նկարահանեցի կուրաշը (ազգային ըմբշամարտի տեսակ), և երբ գինովցած երիտասարդները շարունակ հռհռում էին և համարյա մատով ցույց տալիս ինձ, այնպիսի զգացողություն ունեի, որ ես այն առաջին կինն եմ, ով հրաժարվել է փարաջայից: Իսկ ծերունիներն ասում էին. «Նկարի՛ր, աղջի՛կս. ոչ մեկի վրա ուշադրություն մի՛ դարձրու»:

http://caucasia.at.ua/ կայքին տված հարցազրույցից

Բոլորը, ովքեր տեսել են այս ալբոմը, չեն դադարում զարմանալուց, թե փորձագետներն ի՞նչն են համարել ոտնձգություն ուզբեկ ժողովրդի պատվի նկատմամբ: «Բազմաթիվ լուսանկարներում զարմանքով համոզվում ես, թե ղշլաղներում մարդիկ ինչպիսի հետամնաց պայմաններում են ապրում»,- նշում են նրանք իրենց փորձաքննության մեջ՝ ասես առաջին անգամ հայտնաբերելով, որ Ուզբեկստանում, ինչպես և աշխարհի երկրների մեծ մասում, կա աղքատություն, կան անտուն և իշխանություններից կողմից մոռացված մարդիկ: Ընդ որում, հարցը, թե ինչում է մեղավոր իրականությունը արտացոլող լուսանկարիչը, նրանց մոտ չի ծագում: Հավանաբար, Ահմեդովան մեղավոր է նրա համար, որ փորձագետները, որոնց անիրազեկությունը ֆոտոարվեստի հարցերում ի հայտ եկավ արդեն դատարանում, կնախընտրեին տեսնել շրջապատը վարդագույն ակնոցով, մինչդեռ հայտնաբերեցին կյանքի ողջ ներկապնակը: Սակայն Ումիդայի լուսանկարները, միևնույն է, անելանելիության զգացում չեն թողնում:

«Իմ կարծիքով՝ դրանք բոլորը սեր են: Սեր: Սեր հայրենիքի նկատմամբ: Այս երկրի տղամարդկանց ու կանանց նկատմամբ: Նրա մանուկների ու ծերերի նկատմամբ: Կյանքի, արևի, երկնքի... մեր բոլորի նկատմամբ: Պետք է պարզապես կույր լինել՝ այս ամենը չնկատելու համար»,- այսպես է այս լուսանկարները տեսնում ռուսաստանյան «Նովայա գազետա»-ի թղթակից Վիկտորյա Իվլևան: Նա մենակ չէ իր այս ընկալման մեջ, համոզվելու համար արժի թերթել ալբոմը, որում արտացոլված է հասարակ մարդկանց օրը՝ կյանքի տևողությամբ՝ մանկությունը խորհրդանշող լուսաբացից մինչև նրա խոր մայրամուտ (լուսանկարները կարելի է նայել այստեղ՝ **http://caucasia. at.ua/photo/umidia/4**):

Ումիդային ներկայացված մեղադրանքի ողջ անհեթեթությունը կայանում էր նրանում, որ ժողովրդին զրպարտելու «փաստը» հայտնաբերեցին ալբոմի լույս տեսնելուց միայն երկու տարի անց, երբ այն լայն ճանաչում գտավ պրոֆեսիոնալ տեսանկյունից: Էլ չենք ասում այն մասին, որ Շվեյցարական գենդերային ծրագիրը հաջողությամբ աշխատում էր պետական կառույցների հետ, և այս ալբոմը իշխանական միջանցքներում տեսել, ավելին՝ դրվատել են: Սակայն հետագայում, ինչպես սովորաբար լինում է, փոխվեց իշխանության և շվեյցարական ծրագրի փոխհարաբերությունների հայեցակարգը: Ու այստեղ մնում է միայն գուշակություն անել, թե ինչո՞ւ այդ հարաբերությունների կիզակետում հայտնվեցին հենց Ումիդա Ահմեդովան ու նրա ալբոմը:

Պատկերի ամբողջականության համար քննադատության ենթարկվեց նաև ռեժիսոր Օլեգ Կարպովի հետ նրա նկարահանած «Կուսության լուծը» վավերագրական ֆիլմը՝ նվիրված մինչև ամուսնությունը հարսնացուի կուսության պահպանման զգայուն թեմային (ֆիլմը հնարավոր է դիտել այստեղ՝ http: //video. google.com/ videoplay?docid=7331823776116544 493#): Այն պատմում է երիտասարդ աղջիկների ու պատանիների ճակատագրերի մասին: Նրանց մասին, ովքեր դառնում են ադաթի զոհը, ըստ որի առաջին ամուսնական գիշերից հետո ի ցույց է դրվում հարսի անմեղության վկայության սավանը:

Այս ֆիլմում մի կարևոր առանձնահատկություն կա. նրա հեղինակները եզրակացություններ չեն անում՝ թողնելով, որ հանդիսատեսն ինքը որոշի՝ լա՞վ է այսօր այս սովորույթը, թե՞ ոչ: «Անհնար է մեկ ժամում վերցնել ու «թաղել» ժողովրդական ավանդույթը: Սակայն ավանդույթը հասցնել անհեթեթության՝ նույնպես չի կարելի, երբեմն պետք է նաև գլխով մտածել»,- համարում է ֆիլմի ռեժիսոր Օլեգ Կարպովը: Ի՞նչ կարելի է դրան ավելացնել: Երևի թե այն, որ ֆիլմում արծարծված թեման արդիական է շատ երկրների համար, ներառյալ նաև Հայաստանի:

Դատարանում Ումիդա Ահմեդովան կտրականապես իրեն մեղավոր չճանաչեց, ուստիև դատական վճռով բավարարված չէ և մտադիր է բողոքարկել այն:

«Ինձ ցույց տվեք՝ ես ո՞ւմ եմ զրպարտել»,- նա առաջվա պես լի է այս հարցի պատասխանն ստանալու վճռականությամբ:

Սեքսիզմ

Ստիպեցին ներողություն խնդրել «կնոջ տեղը խոհանոցում է» արտահայտության համար, իսկ մերոնց ո՞վ կստիպի

Հայտնի է, որ Ուկրաինայում բավական լարված նախագահական մրցարշավի ընթացքում Վիկտոր Յանուկովիչը իր ելույթներից մեկում մասնավորապես հայտարարեց. «Ես նախևառաջ համարում եմ, որ նա (Յու. Տիմոշենկոն) վարչապետ է և պետք է պատասխանատվություն կրի իր ամեն բառի համար: Իսկ եթե կին է, ուրեմն պետք է խոհանոց գնա և այնտեղ ցույց տա իր քմահաճույքները»:

Կանանց և իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչները, բնականաբար, մեծ աղմուկ բարձրացրեցին՝ մեղադրելով Յանուկովիչին հակառակ սեռի նկատմամբ խտրական վերաբերմունքի, այսինքն՝ սեքսիզմի մեջ: Լրջորեն անհանգստացած նախագահի թեկնածուն շտապեց խոստովանել, որ «ինքը մի փոքր չափն անցել է» ասելով, որ կնոջ տեղը խոհանոցում է: Յանուկովիչը նաև ավելացրեց, որ «կանայք հսկայական դեր են խաղում մեր կյանքում և մեր քաղաքականության մեջ», և ինքը համարում է, որ ինչքան շատ կանայք լինեն քաղաքականության մեջ, այնքան լավ:

Այս ուկրաինական միջադեպը հիշատակեցինք մի նամակի առնչությամբ, որը վերջերս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանն ուղղել էր ԱԺ խոսնակ Հովիկ Աբրահամյանին: Նամակում պահանջվում էր կարգի հրավիրել որոշ պատգամավորների, ովքեր ԱԺ նիստի ընթացքում իր հասցեին վիրավորական ռեպլիկներ են թույլ տվել: Պատգամավորն իր զայրույթն էր արտահայտել, որ խոսնակը կարգը խախտողներին դիտողություն չէր արել: Խոսնակի պատասխանն առայժմ չկա, սակայն հույսը վերջինն է մեռնում: Մանավանդ որ, նման պահվածքը որոշ պատգամավորների մոտ երևան է գալիս ամեն անգամ, երբ կանայք ԱԺ-ում, իրենց պատկերացմամբ, չափից ավելի են ակտիվանում:

Մենք չենք շտապում կնոջ հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունները սեքսիզմ որակել ոչ այն պատճառով, որ դրանք այդպիսին չեն: Պարզապես հայ քաղաքական այրերը առայժմ երջանիկ անգիտության մեջ են, ինչ է սեքսիզմը և առավել ևս, որ այն պատժելի է:

Նշենք, որ այս եզրույթը սեքսի հետ ոչ մի կապ չունի: Ըստ էության, սա խտրականության տեսակ է, որը նման է բոլորին հայտնի ֆաշիզմին ու ռասիզմին, այն տարբերությամբ, որ սեքսիզմն արդարացնում է մարդկանց բաժանումը և որպես հետևանք նսեմացումը ըստ սեռի հատկանիշի: Հիշեցնենք, որ ժամանակակից աշխարհում սեքսիզմի բարձրաձայնումը հղի է լուրջ անախորժություններով: Օրինակ՝ Հարվարդի համալսարանի ռեկտոր Լոուրենս Սամմերսը պաշտոնանկ արվեց մեր չափանիշներով մի անմեղ ռեպլիկի պատճառով, թե «տղամարդիկ բնածին առանձնահատկությունների շնորհիվ կանանցից ավելի հաջողակ են մտավոր գործունեության ու գիտության մեջ»: Ռեկտորին մեղադրեցին սեքսիզմի մեջ, և ճակատագրի հեգնանքով նրա պաշտոնը զբաղեցրեց կին:

Օգնության ձեռքը

Իրավաբանական կլինիկան տրամադրում է անվճար խորհրդատվություն

- Մենք մրցակից չենք մյուս փաստաբանական հիմնարկներին, մենք ընդամենը նրանց աջակից ենք,- ասում է Իրավաբանական կլինիկայի տնօրեն Գեղեցիկ Գրիգորյանը:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության տնօրենի և Հայկական բաց համալսարանի ռեկտորի միջև կնքված եռակողմ համաձայնագրի հիման վրա Հայկական բաց համալսարանում արդեն 1,5 տարի է՝ գործում է Իրավաբանական կլինիկան, որտեղ անվճար խորհրդատվություն է տրամադրվում հասարակության սոցիալապես անապահով խմբերին:

Իր գործունեության ընթացքում կլինիկայում արդեն քննվել են 126 դատական գործեր, որոնց գերակշիռ մասը վերաբերում են փախստականներին: Այստեղ անվճար իրավաբանական օգնություն կարող են ստանալ նաև գենդերային բռնության և թրաֆիքինգի զոհ դարձած մարդիկ:

Կլինիկայի հասցեն է.

Հայկական բաց համալսարան
ՀՀ, ք. Երևան, 375049, Գրիբոյեդովի 15,
3-րդ հարկ, 301 սենյակ
Հեռ.՝ 28 13 46

Աշխատանքային ժամերը՝
երկուշաբթի-ուրբաթ ժամը
11:00-16:00-ը

Global Fund for Women

Համարը հրատարակվում է Կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի
Տպաքանակը՝ 6000